ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կենտրոն, Սահմանադրության հրապարակ 1
Հեռ. (0223)2-23-45,(060)704010
Էլ.փոստ info@hrazdan.am
27 փետրվար 2026 թ. N 703

«ԳԼՈԲԱԼ ՍՈԼԱՐ ՍԻՍՏԵՄ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ՀԱՍՄԻԿ ԲԱԼԱՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Բալայան

Տեղեկացնում եմ, որ Հրազդանի համայնքապետարանի կարիքների համար կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/64» ծածկագրով գնման ընթացակարգի 7-րդ, 8-րդ, 9-րդ, 12-դր և 13-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից էր ճանաչվել «Գլոբալ Սոլար Սիստեմ» ՍՊԸ-ն:

Ղեկավարվելով պայմանագրի 2.1.7 կետով՝ տեղեկացնում եմ, որ «ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/64» ծածկագրով պայմանագրի շրջանակներում Պատվիրատու հանդիսացող Հրազդանի համայնքապետարանը 7-րդ, 8-րդ, 9-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժինների մասով Պայմանագիրը միակողմանի լուծում է:

Ուստի, պայմանագրի 8.11 կետի համաձայն «Գլոբալ Սոլար Սիստեմ» ՍՊԸ-ն համարվում է պատշաճ ծանուցված՝ սույն ծանուցումը www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի պահանջներով՝ առաջարկում եմ 10 (տասը) օրվա ընթացքում վճարել պայմանագրի և որակավորման ապահովումները՝ համապատասխանաբար 375.000 (երեք հարյուր յոթանասունհինգ հազար) և 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով, Հրազդանի համայնքապետարանի 900125001488 հաշվեհամարին և ներկայացնել վճարումները հավաստող անդորրագրերը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

Կատարող՝ աշխատակազմի գլխավոր մասնագետ
գնումներ համակարգող՝ Արմինե Ավագյան
Հեռ. 060-70-40-38